ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլի 2014 թվականի N 58 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի մարտի 26-ի N 01/06-1/1346-13 գրությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. «Գյումրու ախտաբանաանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերության նոր շենքի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 3/9 հասցեի 0,029204 (զրո ամբողջ քսանինը հազար երկու հարյուր չորս միլիոներորդական) հեկտար մակերեսով և Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 1/7 հասցեի 0,170513 (զրո ամբողջ հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր տասներեք միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասերը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 25122013-08-0063 և N 25122013-08-0023):
2. Նվիրաբերության հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել հողօգտագործողի միջոցների հաշվին:

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____